


ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ N 273-Ա


3 սեպտեմբերի, 2020 թվական

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի N°298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 2020 թվականի օգոստոսի 19-ի N 2040-Ա, N 2066-Ա, N 2074-Ա, N 2085-Ա, 2020 թվականի օգոստոսի 20-ի N 2097-Ա հրամանների հիման վրա 2020 թվականի օգոստոսի 31-ին և սեպտեմբերի 1-2-ն իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. 24 ժամով արգելել հետևյալ տնտեսվարողներին պատկանող մասնաճյուղերի (հասցեներում իրականացվող) գործունեության ծավալումը՝
 - 1) «Տանյա Հարությունյան» Ա/Ձ՝ ք. Արտաշատ, Մարքսի 5/26.
 - 2) «Արման Կարապետյան» Ա/Ձ՝ ք. Արտաշատ, Իսակովի 76.
 - 3) «Նաիրա Տեխտրիկյան» Ա/Ձ՝ ք. Արտաշատ, Օգոստոսի 23, 21 շենք.
 - 4) «Սամվել Սողոմոն» ՍՊԸ՝ ք. Արթիկ, Բաղրամյան 14:
2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել տնտեսվարողներին սույն որոշման մասին տեղեկացումը:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Վահե Ղազարյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

 Recoverable Signature

X 

VERIFIED OCSP 03/09/20 18:37:48 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ